

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
(ՀՀ պետական կառավարման համակարգի մարմնի անվանումը)

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ 2024Թ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Ծրագրի հերթական համարը	Նպատակը	միջոցառումների անվանումները	միջոցառումների իրականացման արդյունքները	միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6
1	Բարձր տեխնոլոգիական ոլորտում տեխնոլոգիական կրթության որակական և քանակական բարելավում	1.1 Բարձրագույն ուսումնական հաստատություններում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ուղղություններով կրթական ծրագրերի վերանայում, համապատասխանեցում ժամանակակից պահանջներին, ոլորտի ռազմավարությանն ու կարիքներին և ըստ անհրաժեշտության նոր կրթական ծրագրերի մշակում այդ թվում՝ միջազգային համագործակցության վրա հիմնված	Բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից պարբերաբար վերանայվում են կրթական ծրագրերը՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին, մասնավորապես՝ Երևանի պետական համալսարանում, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում արդիականացվել են թվով 49 կրթական ծրագիր (ԿԾ), որոնք 2023-2024 ուսումնական տարում արդեն ներդրվել են ուսումնական գործընթացներում:		

			<p>Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում 2021-2023 թթ. հիմնովին վերանայվել և արդիականացվել են բոլոր, այդ թվում նաև «Տեղեկատվական համակարգեր» մասնագիտությունների բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը:</p> <p>Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում վերանայվել է «Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» կրթական ծրագրերի բովանդակությունն ու կառուցվածքը:</p>		
		1.2 Բարձր տեխնոլոգիական կրթության առաջխաղացումը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղում		Միջոցառումը պետք է իրականացվեր ՀԲ-ի ֆինանսավորմամբ, սակայն միջոցառումը չեղարկվել է Ծրագրի ղեկավար կոմիտեի (ԾՂԿ) 2023 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ, որից հետո նախագծման պայմանագիրը չեղյալ է համարվել, և 2.3 մլն ԱՄՆ դոլարը հատկացվել է Ինժեներական քաղաք բաղադրիչին:	
3	Տեխնոլոգիական ներուժի ներգաղթի խթանմանն ուղղված միջոցառումների իրականացում	3.1 Տեխնոլոգիական ոլորտի պահանջված մասնագետների ներգաղթի համար գրավիչ պայմանների և խթանիչ մեխանիզմների ստեղծում	«Ներուժ 5.0» սիյուռքի տեխնոլոգիական ստարտափներ ծրագրի շրջանակում 2024 թվականին ստացվել է 64 հայտ աշխարհի 20 երկրից՝ ԱՄՆ, Կանադա, Արգենտինա, Մեքսիկա, Բրազիլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Չեխիա, Իտալիայ, Անգլիա,		

			<p>Սերբիա, Շվեդիա, Ավստրիա, Լատվիա, ՌԴ, Վրաստան, Հնդկաստան, Ավստրալիա, Քուվեյթ, Լիբանան: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ Հայաստան են հրավիրվել 26 ստարտափ: Հանձնաժողովի գնահատման արդյունքում՝ մրցույթի երկու՝ «Գաղափարի փուլ» և «Աճի փուլ» բաղադրիչներով հաղթող են ճանաչվել 6 ընկերություններ, որոնց հետ կնքվել են նվիրաբերության պայմանագրերը: Բյուջեն կազմել է 90 մլն ՀՀ դրամ:</p> <p>Ստարտափների կարողությունների զարգացման նպատակով ներգարվվել է միջազգային հեղինակավոր արքսելերատոր «Plug and Play» կազմակերպությունը, որն իր մենթորական թիմով դասընթացների և անհատական մենթորության ձևաչափով անվճար վեց օր շարունակ ակտիվ աշխատանքներ է տարել ստարտափների հետ:</p>		
4	Դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում նորաստեղծ ընկերություններին ֆինանսավորում տրամադրելու միջոցով բարձր տեխնոլոգիական ոլորտում և տնտեսության բոլոր հատվածներում	«Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» ծրագրի «Գաղափարից մինչև բիզնես» անվան ներքո դրամաշնորհային ծրագրի իրականացում	«Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհային ծրագրի «Գաղափարի փուլ» բաղադրիչով 2024 թվականին հայտարարված մրցույթի շրջանակում ստացվել է 85 հայտ: Մրցույթի արդյունքում 11 ընկերություններ ճանաչվել են հաղթող		

	<p>նոր արժեք ստեղծելու և տեխնոլոգիական լուծումների կիրառության ապահովում</p>		<p>և ստացել մինչև 5 մլն ՀՀ դրամի չափով պետական աջակցություն: «Մուտք դեպի շուկա» բաղադրիչով 2024 թվականին հայտարարված մրցույթի շրջանակում ստացվել է 149 հայտ, որոնցից, մրցութային հանձնաժողովի որոշմամբ, առաջին փուլը հաղթահարել է 47-ը: Առաջին փուլը հաղթահարած ընկերությունները, «Ֆասթ մեդիա»-ի հետ համատեղ իրականացված նախագծում, ներկայացրել են իրենց պրոդուկտը պատկերավոր շնորհանդեսի տեսքով՝ հեռուստատեսային ձևաչափով: Մրցութային հանձնաժողովի որոշմամբ հաղթող է ճանաչվել 18 ընկերություն:</p>		
5	<p>Աշխարհի տեխնոլոգիական, կրթական, գիտահետազոտական կենտրոններից գիտելիքի և հմտությունների ներհոսքն ապահովելու, տեխնոլոգիական ոլորտում զարգացումը, ներդրումների ներգրավումը խթանելու նպատակով կրթական և աքսելերացիոն ծրագրերի իրականացում</p>	<p>5.1 «Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» ծրագրի «Տաղանդի ներգրավման բաղադրիչի» շրջանակներում հայ ձեռներեցների վերապատրաստում</p> <p>5.2 Հայկական և արտերկրյա աքսելերատորների/տեխնոլոգիական կենտրոնների միջև կապերի զարգացում, համագործակցության հաստատում</p>	<p>2024 թվականին հայտարարվել է Աքսելերացիոն ծրագիր իրականացնելու նպատակով դրամաշնորհային մրցույթ, որին հայտ են ներկայացրել 4 կազմակերպություններ՝ 500 Startups Incubator LLC, Parsec Institute (Draper University LLC-ի հետ կոնսորցիում), Plug and Play Germany GmbH և Անահիտ տեխնոկենտրոն (“Innov8 Global Advisory” LLC և “The Startup Embassy” Ltd կոնսորցիում): Մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել «Plug & Play Germany GmbH»-ը, որի հետ կնքվել է դրամաշնորհային պայմանագիր: Պայմանագրի շրջանակում «Plug & Play</p>		

			<p>Germany GmbH»-ը՝ տեխնոլոգիական ստարտափ թիմերի համար իրականացնում է 26-շաբաթյա աքսելերացիոն ծրագիր: Աքսելերացիոն ծրագրի մասնակցության համար ստացվել է 119 հայտ, որից նախնական սցրինինգային փուլ է անցել 78-ը, որոնց հետ իրականացվել է հարցազրույցներ (Pitching) հեռավար եղանակով: Ծրագրին մասնակցելու համար ընտրվել են 20 ստարտափ թիմեր, որոնք շաբաթական 3 օր մասնակցում են տարբեր երկրներից ժամանող պրոֆեսիոնալ մենթորիների անցկացրած դասերին (workshop), որից հետո ստանում են անհատական մենթորություն: 2024 թվականի նոյեմբերի 19-22-ը Ծրագրի մասնակից 7 ստարտափ Սիլիկոնյան հովտում մասնակցել են Plug & Play-ի ձմեռային զագաթնաժողովին:</p>	
--	--	--	--	--

6	<p>Հայաստանի Հանրապետությունում առկա տեխնոլոգիական կենտրոնների, տեխնոպարկերի, աքսելերատորների և ինկուբատորների կարողությունների բարելավում, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացման նպատակով Հայաստանի Հանրապետության մարզերում նոր կենտրոնների հիմնում, այդ թվում՝ միջազգային համագործակցության հիման վրա</p>	6.2 Ձեռնարկատիրական ենթակառուցվածքների ստեղծում	<p>Ընթանում են բանակցություններ «Հովնանյան ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի հետ, իրենց կողմից ներկայացված առաջարկի՝ կլաստեր ստեղծելու ուղղությամբ:</p>		
7	<p>«Ինժեներական քաղաքի» օրինակով ճարտարագիտական և արդյունաբերական հատուկ գոտիների ստեղծում և զարգացում</p>	7.1 Տեխնոլոգիական և արդյունաբերական կենտրոնների ստեղծում	<p>«Առնվազն 1 մարզում տեխնոլոգիական կլաստերի ստեղծման նախապատրաստական աշխատանքների իրականացում» միջոցառման շրջանակում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը շարունակում է աշխատանքները տեղական և միջազգային գործընկերների հետ: Ֆինանսական միջոցներ ներգրավելու պարագայում նախատեսվում է ՀՀ</p>		

			Սյունիքի մարզում հիմնել տեխնոլոգիական կլաստեր:		
8	Աշխարհում, այդ թվում՝ միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներում, միջոցառումներում հայկական բարձր տեխնոլոգիական ոլորտի (ընկերությունների) ներկայության ապահովում և առաջխաղացում	8.3 Հայկական ընկերությունների հետ համատեղ միջազգային և երկկողմ բիզնես ֆորումների կազմակերպչական աշխատանքների իրագործում	««1043 Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր» ծրագրի 11007 «Շուկաների զարգացում և միջազգային համագործակցություն»» միջոցառման ծրագիրը հաստատելու վերաբերյալ ՀՀ ԲՏԱ նախարարի 2024 թվականի մարտի 1-ի թիվ 363-Ա հրաման 1. «Նորարար Հայաստան 2024» աշխատաժողով (2 մարտի 2024 թ., Երևան, Հայաստանի Հանրապետություն): 2. «Նորարարության և տեխնոլոգիաների համաշխարհային համաժողով 2024» (4-7 հոկտեմբերի 2024 թ., Երևան, Հայաստանի Հանրապետություն): 3. «Հայկական ընկերությունների մոտոց ճապոնական շուկա» խորագրով աշխատաժողով (27 սեպտեմբերի 2024 թ., Երևան, Հայաստանի Հանրապետություն): 4. «Թվայնացի՛ր, Հայաստա՛ն» խորագրով աշխատաժողով (30 նոյեմբերի 2024 թ., Երևան, Հայաստանի Հանրապետություն)		
		8.4 Հայրենական և միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներին հայկական ԲՏ, ոլորտի ընկերությունների	««1043 Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի շուկայի զարգացման ծրագիր» ծրագրի 11007 «Շուկաների զարգացում և		

		<p>հետ համատեղ մասնակցությունն, ապահովելուն ուղղված կազմակերպչական աշխատանքներ</p>	<p>միջազգային համագործակցություն»» միջոցառման ծրագիրը հաստատելու վերաբերյալ ՀՀ ՔՏԱ նախարարի 2024 թվականի մարտի 1-ի թիվ 363-Ա հրաման</p> <p>1. «Քնվրջնս հնդիա 2024» (Convergence India 2024) միջազգային ցուցահանդես (17-19 հունվարի 2024, Դելի, Հնդկաստանի Հանրապետություն):</p> <p>2. «Համաշխարհային բջջային կոնգրես 2024» (Mobile World Congress Barcelona 2024) միջազգային ցուցահանդես (26-29 փետրվարի 2024 թ., Բարսելոնա, Իսպանիայի Թագավորություն):</p> <p>3.«Վիվա Թեքնոլոջի 2024» (Viva Technology 2024) միջազգային ցուցահանդես (22-25 մայիսի 2024 թ., Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն):</p> <p>4. «Դիջիթեք 24» (Digitec24) միջազգային ցուցահանդես (4-6 հոկտեմբերի 2024 թ., Երևան, Հայաստանի Հանրապետություն):</p> <p>5. Տիեզերագնացության միջազգային 75-րդ համաժողով 2024»-ի (75th international astronautical congress 2024) շրջանակում անցկացվող միջազգային ցուցահանդես (14-18 հոկտեմբերի 2024 թ., Միլան, Իտալիայի Հանրապետություն):</p>		
--	--	--	---	--	--

9	<p>Բարձր տեխնոլոգիական ոլորտի առաջանցիկ զարգացման նպատակով տեխնոլոգիական ընկերությունների և բուհերի արդյունավետ համագործակցության խթանում՝ նոր մասնագետների պատրաստման և այլ ոլորտի մասնագետներին վերամասնագիտանալու հնարավորություն ընձեռեցնելու միջոցով</p>	<p>9.3 Մարզերում և Երևան քաղաքում դասընթացների կազմակերպման միջոցառման շրջանակում տարեկան մինչև 2000 շահառուների ուսուցման պատշաճ պայմանների ստեղծում և ուսուցում</p>	<p>2024 թվականին «Մասնագետների պատրաստման բարձրագույն ուսումնական հաստատություններ-մասնավոր հատված համագործակցություն» ծրագրում կատարվել են փոփոխություններ և կազմակերպվում են հետևյալ բաղադրիչներով՝</p> <ul style="list-style-type: none"> • «Մասսայական ուսուցում» բաղադրիչ, որի շրջանակում SS ոլորտի դասընթացներ են կազմակերպվել ՀՀ Գեղարքունիքի, ՀՀ Վայոց ձորի և ՀՀ Սյունիքի մարզերի 9 համայնքներում: Ծրագրով շուրջ 400 մասնակից տեխնոլոգիական ոլորտի գիտելիքներ են ստացել ծրագրավորման հիմնական ուղղությունների, արհեստական բանականության, դիզայնի, թանկարժեքների, ինչպես նաև ապագայի մասնագիտացումների վերաբերյալ: • «Կարողությունների զարգացում» բաղադրիչ, որի շրջանակում ստեղծվել է «վաուչերային ֆոնդ», որից դրամաշնորհներ են տրամադրվում ոլորտային կազմակերպություններին իրենց կադրերին վերապատրաստելու նպատակով: Ծրագիրն իրականացվել է 2 փուլով: Ծրագրի շրջանակում 23 կազմակերպության 275 աշխատակից անցել են վերապատրաստման 		
---	---	---	--	--	--

			<p>դասընթացներ 5 ուսումնական կենտրոններում:</p> <ul style="list-style-type: none">• Գործնական հմտությունների կատարելագործում: Դեկտեմբերի 19-22-ը Ծաղկաձորում իրականացվել է տեխնոլոգիական հաքաթոն, որին մասնակցել են Հայաստանի 11 բուհերի 110 ուսանողներ՝ տեխնոլոգիական լավագույն լուծումներն առաջարկելով տրված խնդիրներին: Հաքաթոնի ընթացքում կազմակերպվեն նաև մասնագիտական սեմինարներ և քննարկումներ նախարարության, քիզնեսի, ստարտափների, ուսանողների, ինչպես նաև գիտական և կրթական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:• Հայ-հնդկական SCS ուսումնական կենտրոնի գործունեության ապահովման, SS դասընթացների կազմակերպում» - Ծրագրով վերապատրաստվել է բարձր տեխնոլոգիաների ոլորտի շուրջ 873 մասնագետ:• 2023 թվականի նոյեմբերի 23-ին կնքված պայամանագրերով 2024 թվականի ընթացքում իրականացվել են վերապատրաստման դասընթացներ 3 ուսումնական կենտրոնների կողմից: Արդյունքում դասընթացներին մասնակցել են շուրջ 849 անձ, որոնցից 529-ը անցել է նոր	
--	--	--	--	--

			աշխատանքի կամ ունեցել է աշխատանքային առաջընթաց:		
10	Ոլորտի ընկերությունների բիզնես կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում	Տեխնոլոգիական ընկերությունների համար կարողությունների ամրապնդմանն ուղղված դասընթացների և սեմինարների կազմակերպում	«Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհային ծրագրի «Գաղափարի փուլ» բաղադրիչով 2024 թվականին հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված 11 ընկերությունների ներկայացուցիչները մասնակցել են Նախարարության կողմից իրականացվող ինկուբացիոն դասընթացին: «Մուտք դեպի շուկա» բաղադրիչով 2024 թվականին հայտարարված մրցույթի շրջանակում առաջին փուլը հաղթահարած 47 ընկերությունների ներկայացուցիչները մասնակցել են Նախարարության կողմից իրականացվող աքսելերացիոն դասընթացին:		
20	Նույնականացման և իրավասությունների ճանաչման արդիական համակարգի ներդրում	20.1 Ինքնության նույնականացման, հավաստագրման և էլեկտրոնային ստորագրության նոր համակարգի կայացում մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ	Մեկնարկել է նոր սերնդի անձնագրերի և նույնականացման քարտերի (ID) մրցութային գործընթացը: Միջազգային չափորոշիչներին համարժեք էլեկտրոնային նույնականացման ու հավաստագրման նոր միասնական համակարգի ներդրման նպատակով 10 բանկ և 3 տելեկոմ ընկերություն հիմնադրել են համատեղ ընկերություն: Բջջային էլեկտրոնային նույնականացման և ստորագրության mID համակարգի ներդրմամբ օգտվող		

			<p>քաղաքացիները և նույնականացման քարտ ունեցող և առանց էլեկտրոնային կրիչի թողարկված նույնականացման քարտերից բոլոր քաղաքացիները հնարավորություն են ստացել իրականացնել էլեկտրոնային նույնականացում և ստորագրություն (200,733 առանց էլ. կրիչի թողարկված նույնականացման քարտ, որից 63,700-ը օգտագործում է էլեկտրոնային ստորագրություն):</p>		
		<p>20.2 «Ես Եմ» ազգային նույնականացման հարթակի գործարկում</p>	<p>Ներդրվել է «Ես Եմ» ազգային նույնականացման հարթակը (ԵսԵմ), որը պետական ծառայությունների մատուցման մուտքի պատուհան է, ներառում է նույնականացման քարտով, բջջային նույնականացման քարտով, կոնտակտային տվյալներով և բջջային հավելվածով (շուտով) մուտքի լուծումները: Հարթակի միջոցով քաղաքացին կարող է մեկ անգամ նույնականացվելով մուտք գործել առցանց ծառայությունների համակարգ: 2024 թվականի հունվարի 1-ից առցանց պետական ծառայությունների մատուցման համակարգերում մուտքն իրականացվում է «Ես Եմ» հարթակի միջոցով: 2024 թվականին «Ես Եմ» մուտքերի քանակը 2,122,460 է, որից</p>		

			eID՝ 918,331, mID՝ 616,747 և էլ.փոստ՝ 587,382:		
21	Տեղեկատվական և կիբեռանվտանգության կառավարման և զարգացման համակարգի ներդրում, գրագիտության բարձրացում	Թվային կրթության ծրագրերի իրականացում	<p>«Հարձակաբարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը 2022 թվականին իրականացրել է «Կիբեռանվտանգության հիմունքներ» դասընթաց պետական համակարգի աշխատակիցների համար: Մեկնարկել է ԹՈՒՄՈ ստեղծարար կենտրոնի հետ համատեղ իրականացվող կիբեռանվտանգության կարողությունների զարգացման ծրագրի առաջին փուլը, 30 երիտասարդ ներգրավվել է տարբեր կիբեռ սպրինտերում: Առաջիկա մեկ տարվա ընթացքում 60 երիտասարդ կմասնակցի կրթական ծրագրն: Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալությունն իրականացնում է նաև մեկ տարի տևողությամբ երիտասարդ մասնագետների ներգրավման ծրագիրը՝ ներգրավելով 20 երիտասարդի: Ջուզահեռաբար, Ֆրանսիական համալսարանի հետ համատեղ մշակվում է Կիբեռանվտանգության մագիստրոսական ծրագիր, որը համախմբելով 5 տեղական համալսարան, կստեղծի</p>		

			<p>Կիբեռանվտանգության միկրո սերտիֆիկացման շրջանակ: Կիբեռանվտանգության և թվային գրագիտության ծրագիրը պատրաստ է ներկայացնելու Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի քննարկմանը: Միջոցառումը շարունակական է:</p>		
		<p>21.1 Բաց տվյալների քաղաքականությունը սահմանող առանցքային օրենսդրության հաստատմանը</p>	<p>Մշակվել է «Կիբեռանվտանգության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի նպատակն է տեղեկատվական համակարգերում և կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքներում կիբեռանվտանգ միջավայրի ստեղծումը: Նախագիծը քննարկվել է Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2024 թվականի օգոստոսի 12-ի նիստում: Մշակվել է «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագիծը: Նախագծով սահմանվում է տվյալների շտեմարանի ստեղծման, ներդրման, ինչպես նաև «Մեկ հարցման» սկզբունքը: Օրենքի գործողությունը տարածվելու է տեղեկությունների հավաքագրման, մշակման, օգտագործման, տվյալների շտեմարանների ստեղծման, դրանց կառավարման, տեղեկությունները հասանելի դարձնելու հետ կապված հարաբերությունների վրա:</p>		

			Որոշվել է Նախագծերի փաթեթը Վարչապետի գլխավորությամբ քննարկել Ազգային ժողովի համապատասխան ներկայացուցիչների մասնակցությամբ:		
		21.2 Ազգային կիբեռնիջադեպերի արձագանքման՝ միջազգային հավատարմագրված թիմի (CERT/CSIRT) կայացում	2023 թվականի սեպտեմբերից ստեղծվել է Հայաստանի համակարգչային միջադեպերի արձագանքման ազգային թիմը (AM-CERT (Computer Emergency Response Team կամ Computer Security Incident Response Team)): Այն նաև ազգային կոնտակտային կետ է կիբեռանվտանգության ոլորտում միջազգային համագործակցության համար:		
	21.3 Կրիտիկական ենթակառուցվածքների կիբեռանվտանգության պատրաստվածության ապահովում	AM-CERT-ի առաքելությունն է ուսումնասիրել և համակարգել Հայաստանի ազգային կրիտիկական ենթակառուցվածքների կիբեռանվտանգության միջադեպերի արձագանքը: Թիմը (AM-CERT) համակարգել է 9 միջադեպ: 2024 թվականի հունվարից AM-CERT-ը հավատարմագրվել է TF-CSIRT-ի կողմից:			
	21.4 Կիբեռանվտանգության կարողությունների ազգային շրջանակի ձևավորում	AM-CERT-ին զեկուցվել է 28 ահազանգ, որոնցից 12-ը կապված են հավատարմագրերի արտահոսքի (credential leaks) հետ, որոնց մասին տեղեկացվել են գործընկեր կառույցները:			

			Պետական և մասնավոր հատվածի 51 մասնագետ անցել է հնտությունների վերապատրաստում SimSpace հարթակի միջոցով:		
22	Թվային միջավայրի հիմնական ստանդարտների մշակում և ներդրում	22.6 Հանրային ծառայությունների թվայնացման ուղեցուցների հրապարակում	Գործարկվել է հանրային ծառայությունների «Թվայնացման ուղեցույց» կայքը (http://standards.hightech.gov.am): Կայքի կարևորագույն բաղադրիչը «Թվայնացման սկզբունքներ» բաժինն է, որտեղ ներկայացված են հանրային ծառայությունների թվայնացման 14 սկզբունքները և դրանց քայլ առ քայլ ուղեցույցներ: Ուղեցույցը նկարագրում է թվայնացման թիմերի ստեղծման, օգտատիրոջ կարիքների բացահայտման, բիզնես քեյսի և ճանապարհային քարտեզի ստեղծման, թվային ծառայության նախագծման, գործարկման և հետագա բարելավման չափորոշիչները:		
		22.7 Թվային ծառայությունների «Հենակետ» դիզայն համակարգի ամբողջական գործարկում	Սկզբունքների (ստանդարտների) հիման վրա մշակվել և գործարկվել են ՀՀ բարձր տեխնոլոգիական (www.hightech.gov.am), ներքին գործերի նախարարությունների (www.mia.gov.am) և Փրկարար ծառայության (www.rescue.mia.gov.am) պաշտոնական կայքէջերը:		

23	<p>Հանրային ծառայությունների թվայնացում, դրանց առցանց հասանելիության ապահովում, ծառայությունների միասնական կենտրոնների հիմնում</p>	<p>23.1 Ծրագրերի կառավարման էլեկտրոնային միասնական հարթակի ստեղծում</p>		<p>Կայացել է «Ծրագրերի կառավարման էլեկտրոնային միասնական հարթակի ստեղծման տեխնիկական առաջադրանքի կազմման խորհրդատվական ծառայություններ» ձեռքբերման պայմանով գնման մրցույթ: Պայմանագիրը լուծվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն: ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով միջոցառման կատարման ժամկետ է սահմանվել 2025 թվականը: Քննարկվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության նոր ամբողջությամբ թվային համակարգի ստեղծման վերաբերյալ հարցերը:</p>	
		<p>23.6 Թվայնացման պրոտֆեյի կառավարման և ֆինանսավորման իրավական ու ընթացակարգային</p>	<p>ՀՀ վարչապետի 2022 թվականի հունվարի 21-ի թիվ 81-Ա որոշմամբ ստեղծվել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհուրդը՝ Հայաստանի Հանրապետության թվային</p>		

		<p>կառուցակարգերը ներդրված են</p>	<p>վերափոխման, թվային (էլեկտրոնային) հասարակության և տնտեսության ձևավորման ուղղությամբ իրականացվող բարեփոխումների և ծրագրերի, ինչպես նաև ոլորտում միջազգային գործընկերների հետ համագործակցության ու մասնավոր հատվածի հետ երկխոսության համակարգման նպատակով:</p> <p>«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը մշակում և իրականացնում է (...)</p> <p>տեղեկատվայնացման, տեղեկատվական անվտանգության, կիրառական տեխնոլոգիաների, էլեկտրոնային ծառայությունների և էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և զարգացման, թվայնացման գործընթացների համակարգման, միասնական թվայնացված միջավայրի և թվային տնտեսության ձևավորման խթանման ոլորտներում (...)</p> <p>Կառավարության քաղաքականությունը:</p> <p>ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2022 թվականի ապրիլի 11-ին թիվ 1/169 հ որոշմամբ ստեղծվել է «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն»</p>		
--	--	-----------------------------------	--	--	--

			<p>հիմնադրամը: Հիմնադրամի հոգեբարձուների խորհուրդը բաղկացած է ՀՀ փոխվարչապետի գրասենյակի, Կենտրոնական բանկի և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ներկայացուցիչներից:</p> <p>Մշակվել է «Թվային փոխակերպման գործընթացի իրականացում» բյուջետային ծրագրի շրջանակում պետական մարմինների՝ պետական բյուջեի միջոցներից թվային փոխակերպման նախաձեռնությունների ֆինանսավորման կարգի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ): Այն ներառում է նախաձեռնություններին ներկայացվող պահանջները, ֆինանսավորման սկզբունքները և փուլերը, Հայաստանի թվային ճարտարապետությանը համապատասխանության սկզբունքները:</p>		
24	<p>Պետական և համայնքային ծառայությունների մեկանգամյա դիմումի համակարգի ներդրում՝ բացառելով քաղաքացուց տեղեկություններ պահանջելու դեպքերը, եթե այն արդեն առկա է</p>	24.5 Տվյալների ամբողջական կատալոգի ձևավորում և հրապարակում	<p>Քարտեզագրվել և դասակարգվել են գերատեսչությունների կողմից հավաքագրվող տվյալները: Այն հնարավորություն է տալիս բացահայտել և բացառել կրկնությունները: Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության տրամադրած տեղեկատվության համաձայն տվյալների քարտեզագրման</p>		

<p>տեղեկատվական որևէ շտեմարանում</p>		<p>ցուցանիշը՝ 82% է, դասակարգմանը՝ 75%:</p> <p>Գործարկվել է տվյալների կատալոգը, որում առկա է տեղեկություն գերատեսչությունների կողմից տնօրինվող տվյալների և շտեմարանների վերաբերյալ:</p>		
	<p>24.6 «Ամպայինն առաջին» քաղաքականության մշակում համարժեք ընթացակարգերի և ենթակառուցվածքների գործարկմամբ</p>	<p>2024 թվականի հունիսի 14-ին ընդունվել է ««Ամպայինն առաջինը» քաղաքականության մշակման և ներդրման մասին» ՀՀ կառավարության որոշումը: Մշակվել են ամպային տիրույթում տեղակայվող կայքերի անվտանգության պահանջները, որոնք հաստատվել է ՀՀ կառավարության 2024թ. սեպտեմբերի 12-ի թիվ 1445-Լ որոշմամբ: Մշակվել է կայքերի՝ ամպային տիրույթ տեղակայման մեթոդաբանությունը: «Ամպայինն առաջինը» քաղաքականության ներդրման շրջանակում պետական մարմինների կայքերը և համակարգերը տեղափոխվել են ամպային տիրույթ մասնավորապես ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության պաշտոնական կայքը (https://rescue.mia.gov.am), Դատական տեղեկատվական համակարգը (https://datalex.am), Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգը (https://new.arlis.am/hy),</p>		

			Բարձրագույն դատական խորհրդի սերվերային ենթահամակարգը և Հայաստանի զարգացման աջակցման կառավարման համակարգը (ADAMS):		
28	Հայաստանի Հանրապետության բնակչության թվային գրագիտության բարձրացում և թվային գործիքների կիրառման ծավալների աճին ուղղված ծրագրերի իրականացում	28.1 Թվային կրթության ծրագրերի իրականացում	Պետական և մասնավոր հատվածի 51 մասնագետ անցել է հմտությունների վերապատրաստում SimSpace հարթակի միջոցով: 2024 թվականի դեկտեմբերին Հեռահաղորդակցության միջազգային միությունը (ITU) և Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալությունը, ՀՀ Կենտրոնական բանկի և Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության աջակցությամբ հաջողությամբ կազմակերպեցին Հայաստանի առաջին ազգային կիբեռ գորավարժությունը:		
31	Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում ռադիոհաճախների շուրջօրյա վերահսկում և մինչև 100% եթերի մաքրության ապահովում. այդ նպատակով շարժական և բազային ռադիոմոնիթորինգի ժամանակակից համակարգի ներդրում	31.1 ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգերի ձեռքբերում, ՀՀ տարածքում (10 մարզ կենտրոններում) ռադիոհսկման կայանների կառուցում և համակարգի ներդրում	ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ձեռքբերում, ՀՀ տարածքում (10 մարզ կենտրոններում) ռադիոհսկման կայանների կառուցում և համակարգի ներդրում միջոցառման շրջանակում ամբողջությամբ իրականացվել են 2024 թվականի համար նախատեսված մոնիթորինգի և տեղորոշման թվով 19 չսպասարկվող ստացիոնար կայանների տեղակայման, գործարկման, տվյալների փոխանակման միասնական ցանցին ինտեգրման և շահագործման հանձնման աշխատանքները:		

			<p>Այսպիսով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի 31-րդ կետի 31.1 ենթակետով սահմանված միջոցառումը ամբողջությամբ կատարված է: Արդյունքում, 2022-2024 թվականների ընթացքում ՀՀ տարածքում ներդրված բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի՝ թվով 1 գլխավոր (ք.Երևան), թվով 5 սպասարկվող ստացիոնար (ք. Երևան՝ 2 հատ, ք. Գյումրի՝ 1 հատ, ք. Վանաձոր՝ 1 հատ և ք. Գորիս՝ 1 հատ), թվով 20 չսպասարկվող ստացիոնար (ք.Երևան և ՀՀ մարզեր) և թվով 5 շարժական կայանների (ըստ անհրաժեշտության) միջոցով իրականացվում են ռադիոեթերի մշտադիտարկում՝ 24/7 (ժամ/օր) ռեժիմով, որն ապահովվում է եթերի մինչև 100 տոկոս մաքրություն:</p>		
32	Թվային ինտերակտիվ հեռուստատեսության համակարգի ներդրում	32.4 Հայաստանի Հանրապետությունում մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալում	<p>Արբանյակային ունակության վարձակալությունն իրականացվել է երկարաժամկետ պայմանագրի շրջանակներում: Երկկողմ ստանձնած պարտավորություններն իրականացվել են ժամանակին: Միաժամանակ, արբանյակային ունակության վարձակալության դիմաց վճարումները կատարվել են ժամանակին: Պայմանագիրը շարունակական է:</p>		

			<p>Արդյունքում՝ ՀՀ թվային մուլտիպլեքսի հեռարձակման ցանցի թվով 213 հեռուստակայաններից 66-ում հանրապետական սփուման մուլտիպլեքսի հաղորդումը իրականացվում է օպտիկամանրաթելային համակարգով, իսկ թվով 147-ում՝ արբանյակային հեռարձակման ցանցի միջոցով: Միաժամանակ, արբանյակային կապը ծառայում է որպես պահուստ թվով 66 հեռուստակայաններում օպտիկամանրաթելային համակարգի հնարավոր խանգարումների դեպքում: «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության թվային մուլտիպլեքսի միջոցով հեռարձակվում է 28 հեռուստաալիքներ և 7 ռադիոալիքներ: ՀՀ տարածքում հեռուստահեռարձակման ծածկույթը կազմում է 100%:</p>		
35	Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների հասանելիության, մատչելիության և մատուցման բարձր որակի ապահովում	<p>35.2 «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքից բխող իրավական ակտերի մշակում</p> <p>(կատարման ժամկետ՝ Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 9-ամսյա ժամկետում)</p>	<p>•ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 16-ի N 211-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 445-Ն որոշում:</p> <p>Որոշմամբ համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել փոստային կապի</p>		

			<p>օպերատորի գործունեության կանոնակարգում:</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 16-ի N 173-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 444-Ն որոշում: <p>Որոշմամբ համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել սուրհանդակային կապի օպերատորի գործունեության կանոնակարգում:</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2024 թվականի մարտի 19-ի N 04-Ն հրամանով հաստատվել են Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման որակի նորմատիվները: Հրամանով սահմանվել է փոստային կապի օբյեկտների և փոստային կապի երթուղիների օգտագործմամբ փոստային կապի ազգային օպերատորի փոստային ցանցի միջոցով մատուցվող փոստային կապի ունիվերսալ ծառայությունների որակի նորմատիվները: 		
37	Փոստային բաժանմունքներում	37.2 «Հայփոստ» ՓԲԸ-ի փոստային ենթակառուցվածքի	«Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է թվով 3 փոստային բաժանմունքների և 1		

	<p>ծառայությունների լայն շրջանակի մատուցում</p>	<p>արդիականացում և վերագինում</p>	<p>տեսակավորման կենտրոնի արդիականացման աշխատանքներ: Ձեռք են բերվել թվով 21 էլեկտրոնոբիլներ: Այժմ Երևան քաղաքի փոստափոխանակումը ամբողջովին իրականացվում է 14 էլեկտրոնոբիլների միջոցով: Ինչպես նաև թվով 7 էլեկտրոնոբիլ փոխանցվել է առաքման ծառայությանը՝ ծառայության ընդլայնման և արդիականացման նպատակով:</p>		
<p>38</p>	<p>38. Էլեկտրոնային առևտրի զարգացում</p>	<p>38.2 «Էլեկտրոնային առևտրի մասին» ՀՀ օրենքից բխող իրավական ակտերի ընդունում</p>	<p>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոն» (CIPE) հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության արդյունքում որոշվել է պատվիրել «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առևտուրը կարգավորող համապարփակ օրենսդրական շրջանակի վերաբերյալ» հետազոտություն, որով կիրականացվի էլեկտրոնային առևտրին առնչվող ՀՀ օրենսդրության համապարփակ վերլուծություն, ներառյալ լավագույն փորձի հետ համեմատություն: Իրականացված հետազոտության հիման վրա էլ նախատեսվում է նախանշել Հայաստանում էլեկտրոնային առևտրի և դրա զարգացմանը վերաբերող</p>		

			<p>քաղաքականության հիմնական ուղղությունները և բարեփոխման կամ լավարկման ենթակա օրենսդրական կարգավորումների հիմնական շրջանակը:</p> <p>Հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել ԸԴՎԱՅՁ (ADWISE Consulting) խորհրդատվական ընկերությունը: Հետազոտությունը ներկայացվել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը:</p>		
--	--	--	---	--	--

*Ռազմարդյունաբերության կոմիտեի կողմից 2024 թվականի ընթացքում կատարված միջոցառումների վերաբերյալ հաշվետվությունը ենթակա չէ հրապարակման: